

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերը	Հղումը
1	2	3	4
<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	<p>1. Երիտասարդական քաղաքականության մասնակցային գործընթացի խթանում և զարգացում</p>	<p>Երիտասարդական աշխատողի համակարգի ինստիտուցիոնալ հիմքերի զարգացում՝</p> <p>1) երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագրի մշակում և հաստատում</p> <p>2) ուսումնական ուղեցույցի պատրաստում և հրատարակում</p> <p>3) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, երիտասարդական աշխատողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում</p>	<p>ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.2-րդ ենթակետի երրորդ պարբերություն</p>

1	2	3	4
	<p>2. Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում</p>	<p>ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական խոշոր համայնքներում նախադպրոցական հիմնարկների ավագ տարիքի երեխաների և դպրոցների 5-րդ և 6-րդ դասարանների աշակերտների համար տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշում՝</p> <p>1) ֆիզկուլտուրային-առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումների՝ սպորտլանդիաների անցկացում</p> <p>2) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նշանակության քարոզչություն</p>	<p>ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.3-րդ ենթակետ</p>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ